

ՓՈԽԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԵՐԱԽՄԱՍՏԱԿՈՐՈՒՄԸ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՈՎ ԴԱՐՁՎԱԾ ՔՆՆԵՐՈՒՄ

Ցանկացած լեզվի ազատ և կայուն կապակցությունների իմաստային փոխակերպումը կարող է տեղի ունենալ ոճական տարբեր հնարներով՝ փոխաբերացմամբ, փոխանվանացմամբ, չափազանցությամբ, շրջափոխությամբ, համեմատությամբ և այլն: Հարկ է նշել, որ ամենատարածված և ամենագործուն ուղիներից մեկը փոխանվանացումն է:

Փոխանունությունը խոսքին պատկերավորություն հաղորդող ոճական հնար է: Այն այլաբերության մի տեսակ է, որի դեպքում բառը կամ բառակապակցությունն օգտագործվում է մեկ այլ բառի կամ կապակցության փոխարեն, որի հետ ունի տրամաբանական, պատճառահետևանքային կամ իմաստային այլ առնչություններ:

Ինչպես արդեն նշել ենք, փոխանունությունը հիմնված է առարկաների և երևույթների ներքին ու արտաքին կապերի վրա, որոնք պայմանավորված են այդ հասկացությունների միջև եղած կցորդական զուգորդություններով¹:

Փոխանունությունը, որ լայնորեն գործածվում է լեզվի խոսակցական, գեղարվեստական և հրատարակչական գործառական ոճերում, կարող է արտահայտել բազմապիսի հարաբերություններ, հետևաբար և խոսքում տարբեր դրսևորումներ ունենալ:

Փոխանունության ոճական հնարով ձևավորվում են բազմաթիվ դարձվածքներ: Այս դեպքում փոխանունությունը բառակապակցության մեկ անդամի գործածությունն է մաս մյուս անդամի փոխարեն, որի դեպքում բառակապակցությանը փոխարինող բառն արտահայտում է և՛ իր, և փոխարինվող բառի իմաստը:

Դարձվածքներում հանդիպող փոխանունություններից հիմնականներից են սերումը, պարունակողի և պարունակյալի հարաբերությունը և մասի ու ամբողջի հարաբերությունը²:

Տարբեր լեզուներում, այդ թվում՝ հայերենում, ռուսերենում և անգլերենում, տարածված երևույթ է զգայությունների անվանումների փոխարեն զգայաբանների անվանումների օգտագործումը, ինչպես, օրինակ՝ լսողությանը, տեսողությանն ու հայացքին փոխարինում են ականջ և աչք բառերը: Տարօրինակ չէ, որ ժողովուրդը մախընտրում է վերջիններս, քանի որ այս կերպ զգայությունն

¹ Գևորգյան Ե., Հայերենի դարձվածքները, Երևան, 1969, էջ 67:

² Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2003, էջ 357:

ավելի է շեշտվում, խոսքը դառնում է ավելի պարզ ու մատչելի, հետևաբար և լայն տարածում է ստանում և դառնում ավելի գործածական: Նույն ձևով բերանը փոխարինում է խոսքին, գլուխը՝ խելքին ու դատողությանը, լեզուն, ինչպես բերանը՝ խոսքին: Ձեռք բառն օգտագործվում է աշխատանքի ու գործելակերպի փոխարեն, ոտքը՝ քայլելու կարողությանը, սիրտը՝ փորին ու ստամոքսին, իսկ փորը՝ սրտին, քիթը՝ հոտառությանը և այլն:

Մարմնի մասերի անվանումների փոխարեն զգայությունների անվանումների գործածության հիման վրա ձևավորվել են մեծ թվով դարձվածքներ: Բերենք մի քանի նման դարձվածքներ հայերենում, ռուսերենում և անգլերենում*:

Ականջը ծանր - Դժվարությամբ լսող, կիսախուլ: *Թեև ծերացած, թեև նրա ականջները ծանր էին լսում, բայց աներկյուղ այրական սիրտ էր ստացել* (ԴԵ, IV, 44):

Աչքը պտտացնել - Թեթևակի նայել, զննել: *Աչքը պտտեցրեց այս ու այն կողմ և հանկարծ իր կամքից անկախ կանգ առավ մի աղջկա վրա* (ԻԵ, III, 365):

Քթին դիպչել - Հոտ զգալ: *Կազինոյի մոտով անցնելիս նրա քթին դիպավ խորովածի սուր բուրմունքը* (ՄԱ, 229):

Սիրտը ետ գալ - Փսիխել: *Այդ սարսափելի տեսարանը տեսավ թե չէ, սիրտը ետ եկավ*:

Навострить уши - 1. Պատրաստվել, շատ ուշադիր լսել: 2. Ականջները լարել: *Пётр Иванович приподнялся немного с дивана, вынул из рта сигару и навострил уши* (ГИО, 41):

Замазывать рот - Ստիպել մեկին լռել, չխոսել (սովորաբար կաշառելով): *Лестью да лаской вы мне теперь рта не замажете! – сказал он твёрдо и с угрозой* (ՄԴ, 76):

Бросаться в глаза – Նկատվել: *Господину Заметову прежде всего ваш гнев и ваша открытая смелость в глаза бросились* (ԴՓՈ, 433):

Бросаться в нос - Սուր կերպով զգացվել (հոտի մասին): *Как только он вошёл в дом, ему в нос бросился запах уже приготовленного обеда*:

Give ear to sb - (բառացի՝ականջը տալ մեկին): Լսել մեկին: *Giving one ear to Mrs Thomson he still managed to hear something of the suave and witty conversation around him* (CAC, 292):

* Հոդվածում տեղ գտած դարձվածքներն ու նրանց բացատրությունները բաղված են հետևյալ բառարաններից՝ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1-4, Ե., 1969-1980, Սուրխաթյան Ա., Գալստյան Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975, Ամատունի Ա., Հայոց բառ ու բան, 1912. *Англо-русский фразеологический словарь* (составил А.В. Кунин), т. 1-2, М., 1967, *Фразеологический словарь русского языка*, под ред. А.И. Молоткова, М., 1978, Д. И. Квеселевич, *Русско-английский фразеологический словарь*, М., 1998, *Brewer's Dictionary of Phrase and Fable*, London, 1956, *The Old English Dictionary*, vol. 1-12, Oxford, 1961.

All eyes are turned to sb / sth - (բառացի՝ բոլոր աչքերն ուղղված են մեկին / մի բանին): Բոլորը նայում են մեկին, մի բանի: *Every eye was turned upon Bosinney; all waited with a strange, suspicious look for his answer* (GJM, 74).

Have a (good) nose for sth - (բառացի՝ ունենալ(լավ) քիթ ինչ-որ բանի համար): Լավ հոտառություն ունենալ: *This friendly and cynical mongrel – offspring of a liaison between a Russian poodle and a fox – terrier had a nose for the unusual* (GJM, 101).

Ինչպես տեսնում եք, բոլոր լեզուներում էլ հանդիպում են դարձվածքներ, որոնցում մարմնի մասի անվանումը փոխարինում է տվյալ հատկանիշն ունեցող զգայարանին: Հայերենի վերջին դարձվածքում “սիրտ” բաղադրիչն օգտագործվել է “փոր”-ի իմաստով Ինչու՞ է սա այսպես: չէ, որ փսխումը կամ սրտխառնուքը աղետամոռսային տրակտի խանգարման արդյունք է: Բանն այն է, որ ժողովուրդը հին ժամանակներում նույնացնում էր կրծքավանդակն ու որովայնը՝ կարծելով, թե սիրտը գտնվում է փորում և, հետևաբար, ստամոքսի գործառույթները վերագրում էին սրտին: Այստեղից էլ, կարծում ենք, ծագել է փորի ու սրտի շփոթությունը: Հավանաբար այստեղից են ծագում նաև մարդկանց որոշակի զգացումները, ներքին դիտավորություններն ու նկատառումներն արտահայտող մի շարք դարձվածքներ, ինչպես, օրինակ՝

Չայնը փորը ընկնել - Չայնը ցածրանալ, (փխթ) սաստիկ վախենալ, ահաբեկվել: *Էնպես դուս թափեցան ուղղափառ մահմեդականքը, որը սովու աչքը կուլ գնացած, ձենը փորն ընկած, ռանգը՝ սպրդնած* (ԱՎ, 55):

Փորում(ը) սատանա լինել (բրբ) (խսկց) - 1. Չար, խորամանկ մտադրություն ունենալ: *Արթինը Մխիթարին հրավիրեց իր տունը, բայց սա ձեռքը թափ տվեց: - Էլի փորումը սատանա կա, - ահով մտածեց պղնձատեր խոջան* (ԽՍ, I, 131): 2. Կատաղած, խենթ ու խելառ, չար լինել:

Ռուսերենում մման երևույթ չի դիտարկվում, իսկ անգլերենում “սրտախառնուք” հասկացությունն արտահայտվում է հենց *ստամոքս* բաղադրիչը պարունակող դարձվածքով՝ *turn one's stomach* (I իմաստ):

Մարմնի մասերի անվանումներ պարունակող, փոխանունության ոճական հնարով ձևավորված դարձվածքների շարքում հանդիպում են բազմաթիվ միավորներ, որոնք արտահայտում են մարդու ներքինն ու նրա զգացմունքները:

Աչք բառով արտահայտվում են մարդու ներքինը, ներքին նկատառումն ու վերաբերմունքը, օրինակ՝

Խորթ աչքով նայել մեկին - Անբարյացակամ վերաբերմունք ցույց տալ: - *Շուտ հեռացիր այստեղից, որդի, քեզ վրա խորթ աչքով են նայում* (ՐԵ, IV, 396):

Look with an evil eye - (բառացի՝ նայել չար աչքով): Անբարյացակամորեն, չարությամբ նայել մեկին կամ մի բանի: *Before she comes here, say*

nothing about her, if you please, to the doctor, because he will look with an evil eye on any nurse of my providing (CW, 360).

Դիտավորության և վերաբերմունքի իմաստներն առաջացել են տեսողության և հայացքի ֆունկցիայի հիման վրա: Արտաքին տեսողական տպավորություններին հաջորդել են հոգեկան տպավորությունները:

Մարդկային ներքինը, ներքին դիտավորությունները և վերաբերմունքն արտահայտում են նաև փոր և սիրտ բառերը: “Սիրտ” բաղադրիչով նման իմաստներ արտահայտող դարձվածքների հանդիպում ենք բոլոր երեք լեզուներում, օրինակ՝

Դոգով և սրտով - Ամբողջ եռբյանբ: *Արքայորդին չի կարող ամուսնանալ Իշխան Սևադայի դստեր հետ այն պարզ պատճառով, որ նա սիրում է ուրիշին, որին և նվիրված է հոգով և սրտով* (ՍԳ, 93):

Մաքուր սրտով - Անկեղծորեն, բարի նպատակներով: *Գնում է նա վերածնված Մաքուր սրտով, բարի սրտով, Դեպի երկիրն իր նախահարց* (ԹԵ, V, 261):

Всем сердцем / всею душой - Անկեղծորեն, անսահման, ջերմորեն սիրել, հավատալ: *И Нелли отдалась ей наконец всем сердцем* (ՃՓԵ, 448).

В глубине сердца - Սրտի խորքում, ներքին, գաղտնի, ենթագիտակցորեն: *Слова ваши в моём сердце, в глубине моего сердца* (ՃՓՈ, 470).

A heavy heart - (բառացի՝ ծանր սիրտ): Տանջվող, տառապող հոգի: *With a heavy heart he considered also, that Brodie's anger might react upon mary* (CAH, 167).

At / in the bottom of one's heart - (բառացի՝ մեկի սրտի ներքևում): *Սրտի խորքում: At the bottom of her heart was the hope that the child would be still – born* (MWH, 349).

“Փորը” բաղադրիչով դարձվածքներ, որոնք արտահայտում են հիշյալ երկու իմաստները (ներքին դիտավորություն և վերաբերմունք) հանդիպում են միայն հայերենում, օրինակ՝

Փորը օձ մտնել - Մեկին վնասելու դիտավորությունից հանգիստ չունենալ: *Փորն օձ ա մտել, ընչանք մուռը չհանի, չի դիմջանալ* (ՅԲԲ):

Մուրազը փորը / փորում թողնել - Չթողնել, որ մեկի փափազը կատարվի: *Բայց ա խ՛ Աղասին վաղուց էր իր մուրազին հասել ու նրանց մուրազը փոր-ներումը թողել* (ԱՎ, 24):

Սիրտ բառով ժողովուրդը մեծ բազմազանությամբ ներկայացնում է մարդու հոգեկան աշխարհը, ցույց տալիս, թե ինչ է կատարվում նրա հոգում՝ ուրախ է մարդը, թե՞ տխուր, երջանիկ է, թե՞ դժբախտ. սիրում է, թե՞ ատում, վախեցած է, թե՞ քաջությամբ լի, բարկացած է, թե՞ խաղաղ և այլն: Այս բառով կարող են արտահայտվել նաև մարդու մի շարք հատկանիշներ՝ տրամադրվածություն,

բարություն կամ չարություն, վախ, վեհություն և այլն: Դիտարկվող երեք լեզուներում հանդիպում են *սիրտ* բաղադրիչով բազմաթիվ դարձվածքներ, որոնք ցույց են տալիս ամենատարբեր զգացմունքներ ու հատկանիշներ: Բերենք մի քանի օրինակ՝

Առյուծի սիրտ ունենալ / կրել - Քաջ, խիզախ լինել: *Այժմ իմ պարտականությունն է հասկացնել նրան, որ առյուծը զառազդի մեջ էլ առյուծի սիրտ է կրում* (ՍՊ, 318):

Ի՞նչ սրտով, - Ի՞նչ տրամադրությամբ, անտրամադիր: *Վհատումն է հոգիս գրկել, անհուսությունն անհուն փռվել*, - *Ի՞նչ խոսքերով, ինչպե՞ս երգել և ի՞նչ սրտով հիմա սիրել* (ՏԵ, 76):

Սիրտը շուռ անել / բերել / գալ / տալ - խիստ բարկանալ, ինքն իրենից դուրս գալ, սաստիկ տխրել: - *Տիրուհի, ես զարմանում եմ, որ դու այդպիսի դատարկ բանի համար սիրտդ շուռ ես բերում* (ԱԵ, 432):

Сердце надрыивается (ժող.) - Ինչ-որ մեկը տանջվում է, տառապում: *Сердце надрывалось: звуки как будто пели об обманутой любви и безнадёжной тоске* (ГМО, 249).

Давать / дать волю сердцу (ինգ.) - Հուզվել: *Предвидя вечную разлуку, Боюсь я сердцу волю дать* (ԱՄԴ, 179).

Золотое сердце - Բարի, սիրող, ազնիվ: - *О, вы, русские,- сказал он, - золотые у вас сердца* (ՏԻՇ, 347).

От сердца отошло - Սիրտը հանգստացավ, հոգին թեթևացավ: *Чмо-мо как бы разом отошло у него от сердца* (ԴՓՈ, 476).

A hard heart - (բառացի՝ կարծր՝ պինդ սիրտ): Դաժան, քարսիրտ անձ: *Indeed, it would have been a hard heart that failed to be moved by the sight of Frank* (ՄՎՐ, 365).

Have a good / kind heart - (բառացի՝ լավ / բարի սիրտ ունենալ): Բարի, մեծահոգի լինել: *Nor did she ever perceive that her hearers sympathized with Fortune, for her heart was kind* (ԶԴՄ, 63).

Give one's heart to sb / sth - (բառացի՝ սիրտը տալ մեկին, մի բանի): Սիրտը տալ, նվիրվել, սիրել մեկին / մի բանի: *As though to her music she was giving a heart he had never seen* (ԶԴԵ, 38).

Այք բաղադրիչով էլ կան այնպիսի դարձվածքներ, որ արտահայտում են տարբեր զգացմունքներ ու հատկանիշներ: Եվ սա, կարծում ենք, պատահական չէ: Չէ՞ որ նայելով մարդու աչքերին կարելի է հասկանալ, թե ինչ է կատարվում նրա հոգում: Աչքերն են մատնում, թե մարդը ծշմարիտն է ասում, թե՞ ստում է, անկեղծ է, թե՞ կեղծավոր և այլն: Դիտարկվող երեք լեզուներում (և ոչ միայն նրանցում) բազմաթիվ են հիշյալ իմաստներն արտահայտող դարձվածքները և դա բնական է, քանի որ այս լեզուները կրող բոլոր ժողովուրդներն էլ կարող են

աչքերի արտահայտության հիման վրա դատողություններ անել, հասկանալ մարդու ներաշխարհը, նրա հույզերն ու զգացմունքները և վերացարկուններ կատարել:

Այժմ բերենք մի շարք նման դարձվածքներ հայերենում, ռուսերենում և անգլերենում:

Աչքի լույսը չխնայել - Մեկի համար ոչինչ չխնայել, - *Այդ ի՞նչ հարց է. քեզ համար ես աչքս լույսն էլ չեմ խնայի* (ԽՅ, 145):

Աչք դնել - 1. Հավանել, սեր տարածել: *Գիտե՞ս, որ մեր նախարարներից մեկը աչք է դրել Անահիտին* (ԴՎ, 243): 2. Հավանել, ծեռք բերելու ցանկություն ունենալ:

Աչքը ծակել(ը) - Նախանձել, չհանդուրժել: *Անդրեյ Պետրովիչ էլիզբարդովի աստղը շատերի աչքն է ծակում* (ՇԵ, 250):

Չար աչք - Նախանձոտ հայացք, նայվածք, որ դժբախտություն, վնաս է բերում: - *Ղուբ պարոններ, չար աչքով զարկեցիք իմ բախտավորությանը, - պատասխանեց Դրաչկովը բարկությանմբ* (ՌԵ, III, 186):

Бережь как зеницу ока - Աչքի լույսի պես պահպանել: *Старик же видит в них друзей надёжных И бережёт их как зеницу ока* (ՊԱԸ, 95):

Хлопать глазами - Հուզմունք, շփոթություն ցուցաբերել: *Экая флегма злодейская, и тут только глазами хлопает* (ՏԻՇ, 102):

Пускать пыль в глаза - Խաբել, մոլորեցնել մեկին: *Мы не то, что вы, не любили пыль в глаза пускать* (ԿԿ, 29):

The green-eyed monster - (բառացի՝ կանաչ աչքերով հրեշը): Խանդ: *It is the green-eyed monster which doth mock* (ՏԻԴ, 44):

A keen / quick eye - (բառացի՝ սուր աչք): Սուր տեսողություն, դիտողականություն: *He has a keen eye even for the smallest details.*

Բազմաթիվ են գլուխ բաղադրիչով կազմված մարդու մտավոր կարողությունն արտահայտող հատկանիշները, ինչպես նաև այդ հատկանիշներից զուրկ լինելն արտահայտող դարձվածքները: Բերենք մի շարք դարձվածքներ:

Գլխի լինել - Հասկանալ, գիտակցել, իմանալ բանի էությունը: *Գլխի՞ ես, թե ինչ եմ ասում: Խոտը հասել է, հարել է հարկավոր, որ ետացնես, համը կփոխի* (ԽՅ, 349):

Գլուխը մտցնել - 1. Մեկին մի բան հասկացնել, հավատացնել: *Երբ սատանան մարդու գլխի մեջ մի չար միտք է մտցնում, սրտի մեջ էլ մի ահ է գցում* (ՇԵ, 299):

Գլխում միտք ծագել - Մի բան մտածել, մտադրություն առաջանալ: *Այստեղ սակայն Արամի գլխում մի կասկած ծագեց, թե Շողերը դրան կհամաձայնի՞՞ արդյոք* (ԶԵ, II, 116):

Գլուխը դատարկ - Դիմար, անխելք, տգետ, անհասկացող: *Դու հո գիտես, որ չեն խոսում գլուխները դատարկ լինելուց* (ՆՊ, 232):

С царём в голове - Շատ խելացի, հնարամիտ: *Но он любил выстав-
лять себя больше исполнителем чужой идеи, чем со своим царём в голове*
(ДФИ, 40):

Лезть в голову - Համառորեն հասնել, հայտնվել մտքում, գիտակցու-
թյան մեջ: *Уж ведь совсем убитый хожу, а тут ещё дурь в голову лезет*
(ОАП, 97):

Дурья голова - Դիմար մարդ: *Векселья писать? Эх ты, дура, дурья ты
голова* (КАС, 112):

A long head - (բառացի՝ երկար գլուխ): Խորաթափանցություն, հեռատե-
սություն: *But he never argued with an uncle, in that way preserving their opinion
of him as a "long-headed" chap, and the legal care of their property* (GJC, 82):

Put ideas in sb's head - (բառացի՝ մեկի գլխում գաղափարներ դնել):
Մեկի գլուխը մտքեր լցնել: *"I've no doubt you've been putting' some grand, fancy
ideas in her head all this time"* (САН, 425):

A thick - headed thing - (բառացի՝ հաստագլուխ իր): Անհասկացող, բութ
անձ: *Oh, Tom, you poor, thick-headed thing* (ТА, 26):

Մարդու հատկանիշները կարող են արտահայտվել նաև մարմնի այլ
մասերի անվանումներ պարունակող դարձվածքներով, օրինակ՝ ձեռքը կարող է
խորհրդանշել օգնություն, հովանավորություն, ծուլություն ու աշխատասիրու-
թյուն, իշխելու, ղեկավարելու հավակնություն, ազնվություն, ազատություն ու
ժլատություն, փորձառություն ու հմտություն և այլն: Այստեղից փոխանվանա-
կան ոճական հնարով ձևավորվել են *ձեռք բռնել, ձեռքերը ծալած նստել, ոսկի
ձեռքեր, ձեռքը հավաքել, ձեռքը պինդ, ձեռքը երկար, մաքուր ձեռքեր, ոսկի
ձեռքեր, не покладая рук, взять в свои руки, сложа руки, мастер на все
руку, give a hand to sb, take into one's hands, have an upper hand, greedy folk
have long hands*, և այլն: Բերանը և լեզուն կարող են խորհրդանշել շատախո-
սություն, պերճախոսություն՝ *օձի լեզու, ճարտար լեզու, բերանը փակ՝ բանալի
չունի, բերանից ջափափիր թափել*, (ան)զաղտնապահություն, անկեղծություն՝
*բերանից թույլ, բերանում լորի չի թրջվի, язык плохо подвешен, что на уме,
то и на языке, with one's tongue in the cheek* և այլն: Քիթը կարող է խորհրդա-
նշել գոռոզություն, հպարտություն՝ *քիթը տնկել*, խառնակչություն՝ *poke one's
nose into sth*, բծախնդրություն՝ *քթի մազ*, որոշ դարձվածքներում հատկանիշն
արտահայտվում է *լեղի* բառով: Օրինակ՝ ժողովրդի այն դիտարկումը, որ ուժեղ
վախենալու դեպքում լեղին պատռվում է, հիմք է հանդիսացել *լեղին ճաքել,
լեղին պատռվել, լեղին ցամաքել* դարձվածքների առաջացման համար: Մյուս
կողմից՝ լեղին փոխարինում է "քաջություն" բառին, սրանով էլ հիմք հանդիսա-

ցել *լեղի ունենալ, առյուծի լեղի ուտել* և այլ դարձվածքների համար: *Երես* բառն էլ հետաքրքիր գործառույթներ ունի: Այն խորհրդանշում է մարդու վարքագծի հետ կապված հատկանիշներ, հոգեկան աշխարհի այլ հատկանիշներ: Այս բաղադրիչով ձևավորված դարձվածքներն արտահայտում են "համարձակություն" *երես առնել, երես ունենալ*, "չափի կամ ամոթի զգացում" *երեսը պինդ, երեսը գոմշի կաշի շինել, երեսի կաշին հագնիս երթաւ, Բաղդադ՝ չի կտրիր*, "հարգանք, պատիվ, ինչպես նաև անարգանք" *երեսից ընկնել, աստծո երեսից թափած* որկրամոլություն՝ *փորը լցնել, փորը տոգացնել* և այլն:

Փոխանվանական ոճական հնարով կազմված դարձվածքներում մարդուն կարող են փոխարինել *գլուխ, սիրտ, երես, կաշի, քիթ* և այլ բաղադրիչներ, ինչպես, օրինակ՝ *կաշին փրկել, գլուխն ազատել* (կյանքը փրկել), *երեսը կտրվի* (մեռնի), *սիրտը գերել* (հմայել մեկին), *սիրտը մորմոքել, գլուխը պահել* (ապրել), *գլխին գալ* (նախատիքի արժանանալ), *քիթը խոթել* (գործերին խառնվել) և այլն:

Փոխանվանական վերափոխման արձանագրողություններն ուսումնասիրելով նկատում ենք, որ մեծան ոճական հնարով կազմված դարձվածքներ հանդիպում են դիտարկվող երեք լեզուներում (և ոչ միայն նրանցում): Այս համագամանքով է պայմանավորված, որ փոխանունության ոճական հնարով կազմված շատ դարձվածքներ ունեն իրենց համարժեքները դիտարկվող մեկ կամ երկու լեզուներում, ինչպես, օրինակ՝

Ականջը ծանր – *тыг на ухо*

Ականջը տալ – *приклонять ухо – give ear to sb*

Ականջները սրել – *наострять уши – strain / cock / prick one's ears*

Աչքերը բարձրացնել – *поднимать глаза*

Լեզուն կարճացնել – *укоротить язык*

Քթին դիպել – *бросаться в нос*

Բերանը փակել / բերանը ծեփել – *замазывать рот*

Գլուխը գալ, գլխում ծագել – *приходить в голову*

Լեզուն բացվել – *язык развязывается*

Ոսկի ձեռքեր – *золотые руки*

Գլուխը կորցնել – *терять голову – lose one's head*

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ որոշ դեպքերում այս համարժեքները պատճենման արդյունք են, սակայն շատ դեպքերում էլ գործ ունենք տարբեր ժողովուրդների լեզուներում անկախաբար առաջացած համարժեք դարձվածքների կամ պատահական համընկնումների հետ: Մի՞թե միևնույն զգացողության արդյունքը չեն «խողությունը լարել» իմաստն ունեցող *ականջները սրել – наострять уши – strain one's ears* դարձվածքները և կամ արդյոք չէ "ո կարող կաշին կամ մորթը հանդիսանալ կյանքի խորհրդանիշ" հիմք դառնալով *կաշին / մորթը փրկել – спасти шкуру – save one's skin* համարժեք դարձվածքների համար և այլն:

Յուրաքանչյուր լեզվի դարձվածքների ֆոնդի հիմնական մասը հատուկ է միայն տվյալ լեզվին: Այս հանգամանքը խոսում է տվյալ լեզուն կրող ժողովրդի լեզվամտածողության յուրահատկությունների մասին: Սյուս կողմից համարժեք դարձվածքների գոյությունը տարբեր լեզուներում վկայում է այդ լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ընդհանրությունների մասին:

Գրականության ցանկ

- ԱԵ - Աղայան Ղազարոս, Երկեր, Ե., 1979:
 ԱՎ - Արուսյան Խաչատուր, Վերք Հայաստանի, Ե., 1975:
 ԴՎ - Դեմիրճյան Դերենիկ, Վարդանանք, Ե., 1987:
 ԶԵ - Զորյան Ստեփան, Երկերի ժողովածու, հ. 1, 2, հ II Ե., 1960:
 ԹԵ - Թումանյան Դովհ., Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1-10, Գ. IV, Ե., 1990 1996:
 ԻԵ - Իսահակյան Ավետիք, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. III Ե., 1973-1979:
 ԽԴ - Խանգաղյան Սերո, Հողը, Ե., 1964:
 ԽՄ - Խանգաղյան Սերո, Մխիթար սպարապետ, հ. I, Ե., 1965:
 ՍԱ - Մահարի Գուրգեն, Այրվող Այգեստաններ, Ե., 1966:
 ՍԳ - Մուրացան, Գևորգ Սարգսյետունի, Ե., 1957:
 ՆՊ - Նար - Ղոս, Պատմվածքներ, վիպակներ, Ե., 1978:
 ՇԵ - Շիրվանզադե Ա., Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, Երևան, 1930:
 ՏԵ - Տերյան Վահան, Երկեր, Ե., 1989:
 ՐԵ - Րաֆֆի, Երկերի ժողովածու 10 հատորով, հ. III, IV, Ե., 1983-1984:
 ГИО - Гончаров Александр, Обыкновенная история, М., 1968.
 ДФБ - Достоевский Федор, Бедные люди. Повести, А., 1984.
 ДФИ - Достоевский Федор, Идиот, М., 1981.
 ДФП - Достоевский Федор, Преступление и наказание, М., 1983.
 КАС - Куприн Александр, Сочинения в 2-х томах, т.I, М., 1981.
 ЛМГ - Лермонтов Михаил, Герой нашего времени. Стихи- поэмы., Ер., 1984.
 МГ - Горький Максим, Рассказы и повести, "Худ. лит.", М., 1976.
 ОАП - Островский Николай, Пьесы, М., 1982.
 ПАД - Пушкин А. С., Драматические произведения, проза, М., 1982.
 ТИС - Тургенев Иван, Собрание сочинений в 12 т-х, т. 5, М., 1977-1978.
 ЧЧ - Чехов Антон, Человек в футляре, М., 1985.
 САС - Cronin Archibald, The Citadel, М., 1957.
 САН - Cronin Archibald, Hatter's Castle, М., 1963.
 CW - Collins Wilkie, The Woman in White, USA, 1934.
 GJC - Galsworthy John, In Chancery, "Progr. Publ", М., 1955.
 GJM - Galsworthy John, The Man of Property, М., 1955.
 ShWT - Shakespeare William, Two Tragedies, М., 1985.
 TA - Twain Mark, The Adventures of Tom Sawyer, М., 1948.
 MWH - Maugham William, Of Human Bondage, London, 1975.
 MWR - Maugham William, Rain and Other Stories, М., 1977.